

եւ պատովիրեաց լաւ հարկիք առնել Վարդապետին : Իսկ Վարդապետն դարձեալ ուղարկեց եւ ասէ . Ընդէ՞ր ոչ առնու . միթէ ո՞չ հաճեցաւ կամ թէ իւր լայեիս չէ՞ զի չնչին եւ
 110 ոչինչ է մեր տուրքն սակաւ : Ապա հազիւ էառ զխաչն . զբանդահրն եւ զայլն յետ զրկեց :

Եւ անցեալ շարաթ մի՝ յոյժ նեղանայաք եւ տառապէաք . առաւել որ զլեղու նոցա չի դիտէաք : Այլ ես յոյժ տազնապէի՝ յորժամ
 115 անկանէր ի միտս իմ դաւառս իմ եւ սիլաս , քորք եւ վեսայքս իմ , եւ ամենայն ազգականք եւ սիրելիքս . լայի եւ հառաչէի , ակն ունելով թէ ոք արտմեսցի . եւ ոչ ոք էր . այլ եւ միսիթարիչ ինձ ոչ ոք գտաւ . վասն որոյ
 120 խորովէր սիրտս իմ , գալարէին աղիքս , ցնորէր միտքս եւ նուազէր յիս հոգի իմ եւ յիչէի զբան Սաղմոսին , թէ Տա՛յր ինձ ոք թեւս աղանոյ , զի թուչէի վերանայի՝ Լ առ իմ երամս հասանէի . եւ ասի զողբս ի վերայ տալէհիս
 125 անաջող .

Իմ Տէր եւ ստեղծող Աստուած
 ամենից ես դու ողորմած .

Իսկ ես վասն է՞ր եմ անկած ,
 ' Լ ի օտար աշխարհ վրտարած :

130 Ամէնքն են իւր տեղ նստած ,
 մեծամեծ փառաց են հասած .

Իսկ ես ամէնէն զրկած ,
 խիստ ողորմ սիրելեաց զատած :

117 հառաջէի : — 123 յերամս :